

12369

ՊԱՏԻ ԹՆՐԹԵՐԻ ԵՄԱԳԻՐՆԵՐԻ ՅԵՎ,  
ԲԱՆԿՑՈՒՂ, ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԳԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Ն. Կ. ԿՐՈՒԳՍՎԱՅԱ

ԻՆՉՊԵՍ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ  
ԱՆԲՊՈՎ, ԱԾԻԱՏԵԼ, ԳԲԳԻ ՎՐԱ

ОБЯЗАТЕЛЬНЫЙ  
ЭКЗЕМПЛЯР

028  
4 89

ԺԿԽ-ԻՆ ԿԻՑ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՏԱՍՏԱՆ»  
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

06 JUN 2009

ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՑԵՎ,  
ՐԱՆԳՑՈՒՂՔՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԳԱՍԸՆԹԱՑՆԵՐ

---

028  
4-89 7

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱ

**ԻՆՉՊԵՍ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ  
ԿԵՐՊՈՎ ԸՇԽԱՏԵԼ ԳՐԿԻ ՎՐԱ**

---

«Նորհրդային Հայաստան»-ի Հրատարակչություն  
ՑԵՐԵՎԱՆ

1940

21 78-40

028 Կրտսերական  
 4-89 Ինչպես լեզուստան  
 Կողմնակալ պատերազմի  
 վրա

1/14	15/10-78		
17/7	76 50	14	1080p

2/78  
40

Սկսվում է ուսուցումը ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վարչամարմինը՝ պատի թերթերի խմբագիրներին ու բանագյուղթղթակիցներին համար կազմակերպված դասընթացներում:

Դասընթացներում պարապմունքների հիմնական մեթոդն է լինելու ուսանողների կողմից լրագրային աշխատանքի վերաբերյալ բրոշյուրների ինքնուրույն ուսումնասիրումը:

Մոտ ժամանակներս «Բուլչեխտսկայա պեչատ» ժուռնալի խմբագրութունը ուսանողներին կուղարկի (չըջանային և բազմատիրաթ թերթերի խմբագրությունների միջոցով) առաջին բրոշյուրը:

Շատ ընկերներ, վորոնք սովորում են դասընթացներում, դեռ չունեն ինքնուրույն ուսուցման փորձ: Նրանք բնականաբար մեթոդական ոգնություն և ցուցումների կարիք են զգում, թե ինչպես աշխատել դրքի վրա:

Այդ ցուցումներն հեռակայողները կգտնեն մեր կողմից ուղարկվող Ն. Կ. Կրուպսկայայի բրոշյուրի մեջ:

# ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վոչ միայն յերեխաներին, այլև հասակավորներին անհրաժեշտ է սովորելը: «Դար ապրիր, դար սովորիր» — ասում է հին ասացվածքը: Յեւ յուրաքանչյուր հասակավոր մարդ գիտե, թե ինչպիսի ուժ ունի գիտությունը: Մենք գիտենք, թե ինչպես իրենց ամբողջ կյանքի ընթացքում սովորել են այնպիսի մարդիկ, ինչպես Մարքսը, Ենգելսը, Լենինը, Ստալինը, թե վորքան գրքեր են կարդացել նրանք իրենց կյանքի ընթացքում: Մենք գիտենք, թե վորքան են սովորել ու սովորում են խորհրդային ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչները՝ բժիշկները, ագրոնոմները, ինժեներները և այլ մասնագետները:

Յեթե մարդ ապրեր միայն իր խելքով, նա կարողնակեր մնալ անողնական, վայրենի վիճակում: Պատմությունը ցույց է տալիս, վոր մարդիկ մշտապես փոխանակում են իրենց փորձը, իրենց գիտելիքները և մարդկությունը հաղարամյակների ընթացքում կուտակել և հսկայական քանակութամբ գիտելիքներ: Ժամանակակից գիտությունը — մեկ կամ մի քանի հանճարների, հատկապես խելքը, հատկապես

տաղանդավոր, հատկապես շնորհալի մարդկանց հարկնավածքը է: Գիտությունը — այդ մարդկության կողմից կուտակված գիտելիքների հսկայական մի գանձարան է:

Չկան այնպիսի մարդիկ, վորոնք կարողանային յուրացնել հաղարամյակների ընթացքում մարդկության կողմից կուտակված գիտելիքների ամբողջ գանձարանը: Բայց անհրաժեշտ է տիրապետել ամենակարևորին, ամենաեսականին այն ամենից, ինչ կուտակել է մարդկությունը գիտության ամենակարևոր ճյուղերում:

Նյութի ընտրության դործում հսկայական ոգնություն է ցույց տալիս մարքսիզմ-լենինիզմի թեորիային տիրապետումը:

«...թեորիան, — ասել է ընկեր Ստալինը, — պրակտիկներին տալիս է կողմնորոշման ուժ, հեռանկարի պարզություն, համոզմունք՝ աշխատանքի մեջ, հավատ դեպի մեր դործի հաղթանակը» (Ստալին, «Լենինիզմի հարցերը», էջ՝ 299):

«Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթացն» ամենահարուստ նյութ է տալիս սոցիալիզմի համար մղված պայքարի ուսումնասիրման համար, ցույց է տալիս անցած ուղին, ցույց է տալիս, թե ինչպես մարքսիզմ-լենինիզմի թեորիան ծառայել և ծառայում է վորպես դործողության զենք, ինչպես և նա ոգնում թեորիան կապել պրակտիկայի հետ: Կուսակցության պատմությունը մեզ սովորեցնում է, թե պետք է գիտել կյանքը, ինչպես ոգտադործել թեորիան հասկանալու համար, թե ինչ է կատարվում կյանքում:

1920 թվի հոկտեմբերին հանդես դարձավ կոմսոմոլի 3-րդ համադրումարում, Լենինը յերիտասարդութեանը կոչ արեց սովորել, մանրամասն կանգ առալ այն հարցի վրա, թե ի՞նչ և ի՞նչպես պետք է սովորել, թե ի՞նչպիսի հսկայական նշանակութիւն ունի ուսուցումը, թե այն ինչպես սերտորեն պետք է կապված լինի կոմունիզմի կառուցման գործի հետ: Լենինի այդ ճառը ղետեղված է նրա յերկերի 30-րդ հատորում: Անհրաժեշտ է, վորպեսզի վոչ միայն յուրաքանչյուր կոմսոմոլիստ, այլև յուրաքանչյուր կուսակցական, մեր սոցիալիստական պետութեան յուրաքանչյուր քաղաքացի, կարգա այն և իտրամաա նրա մեջ:

Լենինը միայն յերիտասարդութեանը չէ, վոր ասում էր ուսուցման անհրաժեշտութեան մասին: Յերկու տարի դրանից հետո հանդես դարձավ (1922 թվի նոյեմբերի 15-ին) Կոմունիստական Ինտերնացիոնալի 4-րդ կոնգրեսում (այդ ճառը ստված է Լենինի յերկերի 27-րդ հատորում), Վլադիմիր Իլյիչը ղիմելով կոնգրեսի անդամներին, սոցիալիզմի համար պայքարող առաջավոր մարտիկներին, ռուսներին և ոտարեկրկրացիներին, ասաց սովորելու անհրաժեշտութեան մասին:

Այն որվանից, յերբ Իլյիչն ասել է այդ մասին, շատ ժամանակ է անցել: ԽՍՀՄ-ի քաղաքացիներն այդ տարիների ընթացքում համառորեն սովորել են: Միլիոնավոր անգրագետներ դրագետ են դարձել, կիտազրագետները դարձել են լավ դրագետ, շատերը վերջացրել են տասնամյա դպրոցներ, տեխնիկումներ, ԲՈՒՀ-եր: Աճել է յերկրի ընդհանուր կուլ-

տուրականութիւնը: Բայց դեռ շատ բան պետք է անել: Հարկավոր է մինչև վերջ լիկվիդացիայի յենթարկել անգրագիտութիւնն ու կիտազրագիտութիւնը, բոլորին ոգնել տիրապետելու գիտելիքներին՝ յոթնամյակի կամ միջնակարգ դպրոցի ծավալով, Լուրացնել իրենց գիտելիքների մեջ յեղած բացերը: Վորքան ավելի յե մարդ տիրապետում գիտելիքներին, վորքան ավելի լավ է նա սովորում ձեռք բերած գիտելիքները կիրառել կյանքում, այնքան ավելի յե նրա մեջ աճում սովորելու ցանկութիւնը: Յեվ մենք տեսնում ենք, թե ինչպես դատութեան ծարավը ԽՍՀՄ-ի քաղաքացիներին մեջ անչեղորեն աճում է: Ստալինյան Սահմանադրութիւնը, ստախանովյան շարժման աճուժը, մեր սոցիալիստական շինարարութիւնը, միջադգային դրութիւնը, պատերազմի սպառնալիքը—այս բոլորն են ավելի յեն բարձրացնում ձգտումը դեպի գիտելիքները:

Միլիոնավոր տիրաժով լույս տեսած՝ «Համկ(բ)» պատմութեան համառոտ դասընթացը», վորը վատ կերպով լուսավորում է պայքարի ամբողջ անցած ուղին, մեր ամբողջ ժողովրդի մեջ հսկայական հետաքրքրութիւն արթնացրեց դեպի մի շարք կարևորագույն քաղաքական հարցեր: Յեվ իրուր չէ, վոր այդպիսի հետաքրքրութեամբ վարդում են կուսակցութեան պատմութիւնը, նորից են կարդում, ուսումնասիրում են, քննարկում: Այդ հիանալի դիրքը հսկայական դեր կիսողա Խորհուրդների յերկրի, սոցիալիստական հայրենիքի քաղաքացիներին գիտակցութիւնը բարձրացնելու գործում:

Յերբ կարդում ես կուսակցութեան պատմութիւնը, վորտեղ ուշադրութիւն է դարձված ամենադիտալու-

բին, ապա յերևում է, թե ինչպես են մեր հայրենիքի աշխատավորները քայլ առ քայլ, Լենինի-Ստալինի կուսակցութեան ղեկավարութեամբ հասել սոցիալիստական շինարարութեան այն հաջողություններին, վորոնց վկա յենք հանդիսանում մենք: Հարկավոր է, վորպեսզի յուրաքանչյուրը հասկանա, թե ի՞նչպես են ձեռք բերվել այդ նվաճումները և ինչո՞ւմն են դրանք կայանում: Հարկավոր է, վորպեսզի ժողովրդի ամենայն մասաները հասկանան, ուսումնասիրեն մեր մեծ կուսակցութեան պատմութեանը:

«ՀամԿ(բ)Կ պատմութեան համարտա դասընթացը» լուսաբանում և անցած ուղին: Անցած ուղու հիման վրա, այն հարուստ փորձի հիման վրա, վոր ունի կուսակցութեանը, մենք կշարժվենք առաջ, գեպի կոմունիզմի նորանոր հաղթանակներ:

ՀամԿ(բ)Կ Կետևումի վորոշումը կուսակցական պրոպագանդայի վերաբերյալ, շատ բան է ասում այն մասին, թե վորքան կարևոր է դրքի վրա ինքնուրույն կերպով աշխատելու հմտությունը, վորքան կարևոր է այն, վոր մարդ ինքնուրույն կերպով սովորի: «Մարքս-Լենինյան թեորիային տիրապետելը՝ ձեռքբերովի դործ է»: Այդ պարտավորեցնում է մեզ զինվել կուսակցութեան պատմութեան դասագրքի վրա, սկզբնապարտությունների վրա, թերթի վրա ինքնուրույն կերպով աշխատելու հմտութեամբ: Ամենագրվիսավորն է՝ կարողանալ կարդացածի միջից առանձնացնել ամենակարևորը, եյականը, սովորել հասկանալ նյութը:

Ահա՛ թե ինչու այժմ հատուկ սրութեամբ ծանոթանում է ինքնակրթութեան հարցը:

Պեսք է սովորել ինքնուրույն կերպով տիրապետել մարքսիզմ-լենինիզմի թեորիային:

Իլյեչը 1919 թվին Սվերդլովի համալսարանում դասախոսություններ եր կարդում պետութեան մասին: Նա այն ժամանակ ասում էր ունկնդիրներին, վոր կարող է պատահել նրանց համար ամեն բան միանգամից հենց հասկանալի չլինի, այդ դեպքում չպետք է շփոթվել, կյանքը դեռ շատ անդամ մեզ կվերադարձնի այդ հարցին. այն ժամանակ հարկավոր է ուսումնասիրած նյութը նորից կարդալ կրկին ու կրկին անգամ և շատ բան հասկանալի կլինի ավելի լավ ու ավելի՛ խորը:

Յեկ ինքը՝ Իլյեչը մշտապես նորից ու նորից եր կարդում Մարքսի-Ենկելսի յերկերը:

Կուսակցութեանն այժմ հատկապես ընդդժում է ինքնուրույն, ինքնադործ աշխատանքի կարևորութեանը: Մեր յերկրում տեղծված են ըստը պայմանները ինքնուրույն ուսուցման համար:

Անհրաժեշտ է բազմակողմանի ոգնութեան ցույց տալ ինքնակրթութեանը, ոգնել ինքնուրույն կերպով դրքի, թերթի վրա աշխատելուն, դրանց ընթերցումից կորզել վորքան կարելի յի շատ բան:

Մեզ այդ բանին պարտավորեցնում է նաև Համամիութենական Կոմունիստական (բուլշևիկների) կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեյի վորոշումը՝ «Կուսակցական պրոպագանդայի դրվածքի մասին, «ՀամԿ(բ)Կ պատմութեան համարտա դասընթացի» լույս ընծայման կապակցութեամբ»:

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԻՆՔՆԱԿՐԹՈՒ- ԹՅԱՄԲ ՊԱՐԱՊԵԼ ՍԿՍՈՂՆԵՐԻՆ

Վորպեսզի ինքնակրթության պարապմունքները հաջող ընթանան, պետք է ունենալ մի շարք ունակություններ— մտքի մեջ կարդալու սովորություն, կարդալ վոչ շատ դանդաղ, կարողանալ հասկանալ գրքից, թերթից, ուղեցույցից, գրադարանային գրացուցակից, կարողանալ կարդացածից կատարել քաղվածքներ և ամենաանհրաժեշտ նշումներ:

Ինքակրթական աշխատանքի հիմնական ձևն է հանդիսանում սխտեմատիկ ընթերցանությունը: Կարդալիս պետք է նկատի ունենալ հետևյալը.

Ավելի լավ է կարդալ վոչ շատ, բայց հիմնավորապես: Գիրքը «կուզ տալն»— ամենամաքտարադրական գրադմունքն է:

Չափազանց մեծ նշանակութուն ունի գրքի ընտրությունը:

Պետք է պարզ պատկերացնել, թե ինչով ևս ուզում պարապել: Պատահում է այսպես, վոր մարդ ուզում է սովորել առհասարակ, բայց թե կոնկրետ կերպով ի՞նչ, նա չգիտե: Ինչպես վոր կոլանտեսությունում, Փարրիկայում գործն ավելի լավ է ընթանում, վորովհետև աշխատում են սլանով, այնպես էլ ինքնակրթության ասպարիդում գործն ավելի լավ է ընթանում, յեթե ինքնակրթությամբ գրադվողն աչ-

խատում է սլանով և վոչ թե թուչում է մեկ գրքից մյուսը:

Բայց դեռ քիչ է հաշիվ տալ, թե ինչով ևս ուզում պարապել, հարկավոր է կադմել պարապմունքները ուսումնական սրբան: Պարապել ակտող սովորաբար չգիտե վոչ այն դիտելիքների ծախայլը, վոր նա ուզում է ձեռք բերել, վոչ սխտեմը, այսինքն այն կարգը, վորով նա պետք է ձեռք բերի դիտելիքները, չգիտե թե ինչը ինչից հետո կարգա:

Այստեղ կարող են շատ բանով ոգնել դանազան հանձնարարական ցուցակներ, ինքնակրթության ձեռնարկները, ծրագրերը, դասագրքերը: Բայց ամենից լավ է պարապմունքների սկզբում խոսել մի բանիմաց մարդու հետ, խորհուրդ կամ ինչպես ասում են կոնսուլտացիա ստանալ նրանից: Խորհուրդ տալ կարող է ուսուցիչը, գրադարանապետը, կոնսուլտանտը, վորն այժմ սովորաբար հրավիրվում է գրադարան՝ ինքնակրթական աշխատանքում ոգնություն ցույց տալու համար, կամ կուսակցական կաբինետի կոնսուլտանտը: Լավ խորհուրդ կարող է տալ մասնագետը՝ ազդրոնտը, ինժեները, բժիշկը և այլն:

Կոնսուլտացիան կարևոր է հատկապես այն ժամանակ, յերբ պարապմունքները նոր են սկսվում և հաճախ վճռում են հետագա պարապմունքների հաջողությունը:

Ի՞նչպես պետք է պարապել:

ա) Չպետք է շտապել: Ինքնակրթության գործում շտապողականությունը հատկապես վնասակար է:

բ) Պետք է ուշադրութուն դարձնել, վորպեսզի անհասկանալի տեղեր չմնան, պետք է անհասկանալի

քանները փնտոել արժատական բառարաններում, հարց-  
ները տեղյակ մարդկանց, խորհրդակցել կոնսուլտանտ-  
ներին հետ:

դ) Պետք է նորից կարդալ անցած նյութը, ան-  
պայման նորից կարդալ այն, ինչ մշակված է նա-  
խորդ պարապմունքի ժամանակ:

դ) Ձի կարելի է ընդմիջում տալ պարապմունքների  
մեջ, մանավանդ սկզբում, քանի դեռ անցած նյութը  
չի խորացել հիշողության մեջ: Պետք է պարապել  
կանոնավոր կերպով:

յե) Հիշողությանը շատ են ողնում քաղվածքնե-  
րը: Յուրաքանչյուր գլուխ վերջացնելուց հետո, քանի  
դեռ կարդացածը թարմ է հիշողության մեջ, պետք է  
կարդացածից ամենակարևոր բաները դրի առնել  
տետրում:

Յեթե կարդացածը դրքի մեջ մի վորևե միտք  
հասկապես հետաքրքրում է կամ դուր է գալիս, այն  
նույնպես պետք է արտադրել տետրում: Լավ է դրի  
առնել հիշողությամբ, հետո համեմատել տեքստի  
հետ և ապա կրկին անգամ դրի առնել ըստ հիշողու-  
թյան— արդեն ստույգ տեքստը: Այդ զարգացում է  
ուրիշի մտքերը ստույգ կերպով հաղորդելու ունա-  
կությունը, իսկ դա շատ կարևոր է:

Հարկավոր է տետրի մեջ արտադրել նաև այն բո-  
լորը, ինչ պետք է հիշել— իրադարձությունների  
թվականները, անունները, թվերը, անհասկանալի  
բառերի ու արտահայտությունների բացատրու-  
թյունները, քաղաքների անունները: Հարկավոր է հաճա-  
խակի կարդալ դրի առածը: Հարկավոր է դրի առնել  
հասակ, պարզ, փոքրիկի հետ անհրաժեշտ չլինել

ժամանակ ծախսել դրի առածն ըմբռնելու համար:

Պետք է պահպանել այնպիսի պայմաններ, վորոնց  
ժամանակ ամենից ավելի հաջող կարող են ընթանալ  
պարապմունքները:

Ամենից ավելի լավ է պարապել այնպիսի ժամա-  
նակ, յերբ շատ հողնամ չես, ինչպես ասում են «թարմ  
պլիտով»: Ուստի, ամենից ավելի լավ է պարապել ա-  
ռափոտմանից, կամ հանգստանալուց հետո:

Ձի կարելի է պարապել շատ վատ լուսավորության  
տակ, տոթ, խիստ չող սենյակում. դժվար է պարա-  
պել, յերբ շուրջը բարձրաձայն խոսակցություն է տե-  
ղի ունենում, յերբ ամեն ըրպե ուշադրությունը չեղ-  
վում է պարապմունքից:

Ամենից ավելի հարմար է պարապել այն ժամա-  
նակ, յերբ ձեռքի տակ կան անհրաժեշտ ուղեցույց-  
ներ, արժատական բառարաններ և այլն:

Ահա թե ինչու ամենից ավելի լավ է պարապել  
ընթերցաբանում, գրադարանին կից ընթերցանության  
դահլիճում:

## ԻՆՉՊԵՍ ԱՇԽԱՏԵԼ ԳՐԻՎ ԿՐԱ

Ամեն մի նյութի ուսումնասիրութեան հիմքում ընկած է աշխատանքը գրքի վրա:

Ուստի անհրաժեշտ է գրքի վրա աշխատել սովորել: Պետք է ձեռք բերել մտքում արագ վարդապետ սովորութիւնն և հասնել այն բանին, վոր ընթերցման մեխանիզմը դառնա միանգամայն ավտոմատիկ և մտքերը չչեղի:

Բայց միայն այդքանը չէ՛ է: Պետք է նաև սովորել հասկանալ կարդացածը: Դա արդեն պահանջում է վորոշ զարգացում, բառերի ու հասկացողութիւնների բազմապատկառ պաշար:

Կարգացածի լավագույն ըմբռնումը ձեռք է բերվում կարդացողի զարգացման աճմանը դուրսնից: Սակայն պետք է սկզբից հենց աշխատել հաշիվ տալ իրեն այն մասին, թե ի՞նչ է հասկանալի և աշխատել ըմբռնել անհասկանալի բաները: Դրա համար ուղտակար է լինում անհասկանալի բառը, արտահայտութիւնը, միտքը նորից կարդալ: Պետք է աշխատել ըմբռնել անհասկանալին՝ դիմելով սոտար բառերի բառարանի, ենցիկլոպեդիկ բառարանի, համապատասխան դասագրքի, շոշափում թեմայի վերաբերյալ հանրամատչելի գրքի ոգնութեանը և այլն: Յերբ պարզված է անհասկանալի բառի նշանակութիւնը, ուղտակար է արտագրել և հիշել այն ամբողջ Փրազը, վորի

մեջ այդ բառը դործածված է, հորինել մի քանի Փրազներ, վորտեղ հարկ լինի դործածել այդ բառը: Յես սովորեմ եմ ունեցել մի անգամ դիտելու Յ տարեկան մի աղջկա, վորն առաջին անգամն էր լսում «վայրկյանապես» բառը: Հաջորդ կես ժամվա ընթացքում նա դանազան կոմբինացիաներով տասն անգամ կրկնեց այդ բառը: Դեռահասակը վրա հասակավորը պետք է ընթանա նույն այդ ուղիով, վորպեսզի կատարելապես յուրացնի մինչ այդ անհասկանալի բառը և սկսի դործածել այն, յերբ նրա կարիքը լինի: Հարկավոր է միայն հետևել, վոր բառի իմաստն ու յերանդն ըմբռնվի ստույգ կերպով և բառը չգործածվի այլ իմաստով:

Ի հարկէ, անձանոթ արտահայտութիւնների ու բառերի սրարգարանման աշխատի աշխատանքն ընթերցողին շեղում է դիտավորեց՝ գրքի մեջ շարադրված հիմնական մտքերը յուրացնելուց:

Ուստի պետք է աշխատել, վորքան կարելի յե արագ տիրապետել գրական լեզվին:

Անհրաժեշտ է նաև սովորել հաշիվ տալ իրեն կարդացածի մասին: Ավելի լավ է այդ անել վորոշ սխառմով:

Ամենից առաջ, յերբ վերջացնում ես գրքի ընթերցումը, պետք է հաշիվ տաս զեզ թե ի՞նչ էր ուզում ասել հեղինակը, ի՞նչպէսի հիմնական մտքեր է նա զարգացնում իր գրքի մեջ, ի՞նչպիսի իմաստաբեկումներ է նա բերում այդ հիմնական մտքերը պաշտպանելու համար: Մկզբում ավելի յավ է այդ անել գրքի յուրաքանչյուր գլխի վերաբերմամբ: Ծատ կարեւոր է պարզ պատկերացնել հեղինակի մտքի ամ-

բողջ ընթացքը: Կարգացածի պարզ յուրացումն առաջին քայլն է դրքի գիտակցական ընթերցման դրոժում:

Կարող է պատահել, վոր առաջին հարցքին դժվար լինի յուրացնել այն բոլորը, ինչ ասում է հեղինակը: Այդ դեպքում հարկ է լինում գիրքը կարդալ 2-րդ ու 3-րդ անգամ: Յերբ աշխատում ես ինքդ քեզ հաշիվ տալ կարգացածի մասին, հարկավոր է ընկնել բոլոր մանրամասնությունների հետևից, հարկավոր է աշխատել հիշել յուրաքանչյուր բառը: Հարկավոր է աշխատել կարգացածից դուրս բերել ամենանյախանը, հիմնականը: Այնուհետև տեսնել, թե այդ նյախանն ու հիմնականն ինչպես է ամբողջովում մնացած նյութի միջոցով: Յերբեմն հիմնական միտքն իլյուստրացիայի յենթարկելու համար հեղինակը բերում է մի շարք փաստեր, յերբեմն իր միտքն ապացուցում է մի շարք դատողությունների միջոցով: Ամենից լավ է կարգացած դրքի վերաբերյալ գրավոր ձևով կազմել դրքի պլանը: Այս բոլորի մեջ հարկավոր է լավ վարժվել:

Այնուհետև, պետք է ըմբռնել դրքի բովանդակությունը: Յեթե հիմնական դադավարն իլյուստրացիայի յենթարկվում փաստերի միջոցով, ապա պետք է նախ տեսնել, թե դրանք ճի՞շտ են արդյոք շարադրվում, և յերկրորդ՝ արդյո՞ք բավականաչափ տիպիկ են:


Պետք է աշխատել ինքնուրույն կերպով վերհիշել, հավաքել նման կամ լրացուցիչ փաստեր: Պետք է մտածել նաև, թե չի՞ կարելի արդյոք հարցին մոտենալ փոքիս ալ կողմից:

Գիրքը կարդալու ընթացքում պետք է նրանից կատարել քաղվածքներ՝ արտադրել այն, ինչ պետք է և ուզում ես հիշել, — իրադարձությունների թվակառնը, անունները, թվերը: Հաճախ ողորակար է լինում վոչ միայն արտադրել թվերը, այլև նրանց հիման վրա կազմել համապատասխան դիագրամաներ, հարցն ավելի ակնառու կերպով պատկերացնելու համար: Հարկավոր է նաև արտադրել դուր յեկած մտքերը, արտահայտությունները: Սակայն պետք է խուսափել չափից դուրս յերկար քաղվածքներից, վորոնց հասկանալը հետագայում ավելի հեշտ է, քան թե հենց դրքի հասկանալը: Պետք է դրի սունել միայն ամենաանհրաժեշտը՝ թեյիսների ձևով, պահպանելով ստորաբաժանումն ըստ մասերի և այլն: Հարկավոր է դրել պարզ և հասկանալի:

217  
10

Այնպիսի մեծածախալ տետրերից, վորոնց մեջ դրքի շատ եջեր արտադրելու վրա ծախսված է վոչ քիչ ժամանակ և վորոնցից դուրս հանել չի կարող նույնիսկ ինքը՝ տետրի տերը, ողորտ քիչ կարելի յետանալ: Բայց դրա փոխարեն չափազանց ողորակար են սեղմ, պարզ գրված հասկանալի նշումներով տետրերը, վորոնք հնարավորություն են տալիս միանդամից հենց հիշել կարգացածը և ըմբռնել թվական ու ամեն տեսակի այլ նյութերը: Պետք է սովորել նշումը կատարել հենց այդպիսի ձևով, ժամանակ չխնայելով սկզբում վարժությունների վրա, սկսելով կարճ հոգվածներից, աստիճանաբար սովորելու իր համար նշումներ կատարելու հենց այդպիսի ողորակար յեղանակը:

Ի հարկե, վորոչ քեպերում ողորակար է կատար



բել նաև ավելի ընդարձակ քաղվածքներ: Յեթե դերքն ունի, որինակ, բացառիկ հետաքրքրութիւն ու կարեւորութիւն, այն ժամանակ արհեստ չէ ժամանակ ծախսել նաև մանրամասն կոնսպեկտ կազմելու, յերկար ցիտատներն ամբողջապես արտադրելու վրա:

Դա պետք է անել, որինակ, այն դեպքում, յերբ յենթադրվում է տվյալ դերքն ոգտագործել զեկուցման կամ հոգվածի համար:

Ճիշտ այդպես էլ ոգտակար է լինում ընդարձակ քաղվածքներ կատարել այն դեպքում, յերբ նա, ով կատարում է քաղվածքներ, դեռևս բայականաչափ չի տիրապետել դրելու մեխանիզմին, ուղղութեանը, կամ գրական լեզվին: Այդպիսի դեպքերում արտագրելը շատ ոգտակար է: Յեւ ավելի լավ է արտագրել այն, ինչ հետաքրքրում է և առնչութիւն ունի կարդացածի հետ:

Բայց իբրև կանոն, ավելի լավ է նշումները կատարել կարճ, սեղմ, ակնառու:

Այսպիսով, ընթերցանութեան ժամանակ առաջին խնդիրն է իր համար պարզել և յուրացնել կարդացած նյութը:

Յերկրորդ խնդիրը՝ կարդացածն ըմբռնելն է:

Յերրորդ խնդիրն է— կարդացածից կատարել հիշողութեան համար անհրաժեշտ քաղվածքներ:

Յեւ վերջապես չորրորդ խնդիրն է— հաշիվ տալ իրեն, թե կարդացած դիրքն ի՞նչ նոր բան սովորեցրեց. ավելի արդյոք վորևէ նոր գիտելիքներ, սովորեցրեց արդյոք գիտողութեան, աշխատանքի, պարամունքի վորևէ նոր յեղանակ, արթնացրեց արդյոք վորևէ նոր միտք, առաջացրեց արդյոք վորևէ հատուկ արամագրութիւն ու ցանկութիւն:

Այսպիսով, մենք տեղադրեցինք դրքի վրա աշխատելու պլանը կամ սխեման:

Ի հարկէ, այդ պլանը կարելի չէ վորոչ չափով ձևափոխել, մի վորք ալ կերպ ձևակերպել հարցերը: Մաթեմատիկայի, բնագիտութեան և այլ դրքերի վերաբերմամբ հաճախ գործադրելի կլինի սխեմայի միայն մի մասը: Սակայն կարևոր է, վորպետքի լինի վորոչալի սխեմա, վորովհետև այդ դեպքում աշխատանքը կլինի շատ ավելի արդյունավետ: Աշխատանքի սխեման ունի հսկայական նշանակութիւն: Հաճախ դա մարդուն հնարավորութիւն է տալիս տեսնելու այն, ինչ ուրիշները չեն նկատում: Նապոլեոնը, որին նակ, ստուգատեսի ժամանակ միշտ նկատում էր զինվորների համադրեստի վրա յեղած ամենավորք պահասութիւնները, վորոք ստուգատեսից առաջ ուշիտուցով վորոնում և չեյին գտնում սպաները: Բանն այն է, վոր Նապոլեոնն ուներ վորոչալի սխեմա, վորով նա գիտում էր գնդերը. այդ սխեման էլ հենց նրան հնարավորութիւն էր տալիս նկատելու բոլոր թերութիւնները:

Տեսնենք, թե միևնույն առարկային ինչպես են մոտենում զանազան մասնագետները. նրանցից յուրաքանչյուրն ունի դիտելու իր սխեմա: Նկարիչը, որինակ, դիտելով բույսը, այն տեսնում է վորոչ սխեմայով, վորի մեջ մտնում են գույների գույակցումը, նրանց պայծառութիւնը, լուսավորութիւնը, ձևի նրբութիւնը: Բույսը դիտելով, նկարիչը կարող է բոլորովին ուշադրութիւն չդարձնել այն բանի վրա, թե քանի պսակաթերթ ունի ծաղիկը և ի՞նչպես են դրանք դասավորված: Այդ հարցը բոլորովին չի մըտ-

նում նրա դիտողութեան սխտեմի մեջ: Բուսարանն՝  
քնդհակառակը, ամենից առաջ ուշադրութիւն կդարձ-  
նի այդ պատկաթերթերին, տերեւերի դասավորու-  
թեանը և այլն, ու կարող է ամենեւին չնկատել, թե  
տվյալ մոմենտին ինչպես է լուսավորված ծաղիկը և  
նա ինչպես է յերեւում այս կամ այն ֆոնի վրա:

Ճիշտ այդպես ել գրքերի ընթերցանութեան ժա-  
մանակ գրքին մոտենալու վորոշակի սխտեմն ունի  
հակադասական նշանակութիւն: Դա հնարավորութիւն է  
տալիս գրքի մեջ նկատելու այն, ինչ կարելի յէ և  
չնկատել, յեթե նպատակ չես դնում տեսնելու գործի  
հետց այդ կողմը: Գրքի նկատմամբ վորոշակի մոտե-  
ցումն աստիճանաբար դառնում է սովորութիւն:

Գրքից մենք քաղում ենք դիտելիքներ, ուսումնա-  
սիրում ենք ուրիշների փորձը: Յեւ այդ դիտելիքները  
մեր կողմից շատ ավելի լավ կյուրացվեն, յեթե մենք  
գրանք ստուգենք մեր սեփական փորձով:

Ահա թե ինչու «ապրած», զանազան մարդկանց,  
զանազան բարքեր ու սովորութիւններ տեսած մար-  
դը հաճախ կյանքը ճանաչում է դուրս շատ ավելի  
լավ, քան մեկ ուրիշը, վորը չափազանց շատ բան է  
կարդացել, բայց չունի անձնական դիտողութիւնների  
վորեւէ պաշար: Իդուր չէ, վոր մենք հատկապես դնա-  
հատում ենք «փորձված» բժիշկին, «փորձված» ման-  
կավարտին և այլն:

Ուստի, չափազանց կարեւոր է, վորպեսզի ինքնա-  
կրթութեամբ դբարդվողն աշխատի գրքից ձեռք բեր-  
ված դիտելիքներն ստուգել անձնական դիտողութիւն-  
ների միջոցով:

Այս տեսակետից հատուկ նշանակութիւն է ստա-

նում դյուղատեսակական արդյունարերական թանգա-  
րաններ ու ցուցահանդեսներ, որինակելի տեսեսու-  
թիւններ ու ձեռնարկութիւններ այցելելը: Ամեն տե-  
սակ եքսկուրսիաները պետք է լայնորեն պործադրվեն:  
Անհրաժեշտ է միայն, վոր այդ եքսկուրսիաները կազ-  
մակերպված լինեն գործնական ձեռով և չվերածվեն  
սոսկ դվարձալի զբոսանքների: Հարկավոր է եքսկուր-  
սիաների ժամանակ նշումներ կատարել իր համար,  
իսկ ով կարող է թող կատարի նաև նկարներ, դրի էք  
սպավորութիւնները: Պետք է նաև ոգտագործել ամեն  
մի հնարավորութիւն՝ ճանապարհորդելու, լինելու  
նոր վայրերում, տեսնելու և դիտելու նոր մարդկանց,  
նրանց աշխատանքն ու կյանքը: Բայց ատորյա վյանքը  
էս հարուստ նյութ է տալիս դիտողութիւնների հա-  
մար, ուսումնասիրութեան համար: Հարկավոր է  
միայն հաշիվ տալ, թե ինչ էս ուղում դիտել, ինչ  
նպատակով և ապա դիտողութիւնները հասցնել մի-  
չև վերջ, նրանցից անել հետեւութիւններ:

## ՏՆՏԵՍԵԼ ԺԱՄԱՆԱԿԸ ՅԵՎ ՅԵՌԱՆԴԸ

Մենք գիտենք, վոր ամեն մի աշխատանքի մեջ պետք է խնայել, տնտեսել իր և ուրիշի ժամանակը, այսինքն խնայել և՛ իր, և՛ ուրիշի ուժերը, անտեղի չզիտանել դրանք: Իր և ուրիշի ուժերը, իր և ուրիշի ժամանակ խնայել կարողանայն ամեն մի աշխատանք դարձնում է շատ ավելի արտադրողական:

Մենք գիտենք, թե ինչպիսի նշանակութիւն ունի ժամանակի և յեռանդի տնտեսումը Փարբիկայում, արհեստանոցում կատարվող աշխատանքի ժամանակ, դաշտում կատարվող աշխատանքի ժամանակ— Ֆիլիկական աշխատանքի ամեն մի բնագավառում:

Մեր խորհրդային յերկրում, վորտեղ աշխատանքը կատարվում է վոչ թե դործատեր— կապիտալիստի ու կարվածատիրոջ համար, այլ ընդհանուր դործի համար, չափազանց շատ բան է ձեռք բերված աշխատավորների ուժերն ու ժամանակը խնայելու դործում:

Նույնը, ինչ վերաբերում է Ֆիլիկական աշխատանքին, վերաբերում է նաև մտավոր աշխատանքին: Մտավոր աշխատանքով պարապելիս նույնպես, պարապմունքների հաջողութիւնն զգալի չափով կախված է ժամանակի և ուժերի ճիշտ բաշխումից:

Իր և ուրիշի ուժերն ու ժամանակը խնայել կա-

րողանալն ինքնակրթական հաջող աշխատանքի պարամաներից մեկն է:

Ինքնակրթական աշխատանքի մեջ ժամանակի և ուժերի տնտեսում կատարելու համար պետք է.

ա) ճիշտ դասավորել իր ժամանակը.

բ) իրեն համար ստեղծել աշխատանքի առավել նպաստավոր պայմաններ.

գ) տիրապետել զբքի վրա աշխատելու համար անհրաժեշտ ունակութիւններին.

դ) ճիշտ ընտրել պարապմունքների նյութը.

յե) ճիշտ դասավորել աշխատանքը.

զ) ուժերի և ժամանակի տնտեսման տեսակետից մշակել կոլեկտիվ աշխատանքի ձևեր.

է) իր տրամադրութեան տակ ունենալ անհրաժեշտ ձեռնարկներ և ցուցումներ.

## ՃԻՅՏ ԴԱՍԱՎՈՐՆԷԼ ԺԱՄԱՆԱԿԸ

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր, յեքե մեեք  
ուզում եմք արտադրողաբար անցկացնել ժամանակը,  
պետք է ուղիղ դասավորենք այն:

Իսկ ինչպես ենք մենք սովորաբար ծախսում ժա-  
մանակը:

Միայն գործարանում, ֆարրիկայում կամ հիմ-  
նարկում ենք մենք աշխատում ժամերով: Իսկ մնա-  
ցած ժամանակը ծախսվում է ինչպես պատահի-կամ  
զայիս և ծանոթներից մեկը և ժամանակն անցկացնում  
ես զրույցով, կամ ուղղակի պատկած մնում ես մահ-  
ճակալի վրա մի հիմար վեպ ձեռքիդ: Ուշ յերեկոյան  
գլխի յես ընկնում, վոր ժամանակդ իզուր է անցել,  
ձեռքդ ես վերցնում մի վորևէ դործնական գիրք,  
պարզվում է, վոր արդեն հոգնել ես չափից դուրս,  
հարկ է լինում քունը փախցնել ծխելու միջոցով:  
Գիրքը դրվում է մի կողմը, սկսվում է խոսակցու-  
թյունը վորևէ ընկերով հետ կամ վեճեր, վորոնք  
չարունակվում են համարյա մինչև առավոտ: Իսկ ա-  
ռավոտյան դժվարությամբ ես արթնանում, քեզ  
զգում ես ամբողջապես ջարդված:

Պետք է դիտենալ ժամանակի դինը: Դիտնական-  
ները, գրականագետները, պրոֆեսորները սովորու-  
թյուն ունեն ժամանակին պառկել քնելու, արթնանալ  
վաղ, առավոտյան ժամերին աշխատել թարմ գլխով,

նրանք ժամանակը դասավորում են խստորեն: Նրանց  
մոտ մեկ ընդմիջտ սահմանված են արթնանալու, աշ-  
խատանքի, ճաշի, հանգստի, քնի ժամերը: Դրա հե-  
տևանքով աշխատունակությունը չափից դուրս աճում  
է:

Հետաքրքիր է ծանոթանալ, թե իրենց ժամանակն  
ինչպե՞ս եյին դասավորում խոշոր գիտնականները,  
գրողները:

✓ Վերցնենք որինակ Լեյ Տոլստոյին: Նա գրում էր  
վեպեր, վիպակներ ու պատմվածքներ, այն, ինչ  
թվում է, թե ամբողջապես կախված է տրամադրու-  
թյունից: Մինչդեռ նրա ժամանակը խստորեն դասա-  
վորված էր: Առավոտները նա գրում էր, լարված աշ-  
խատելով, մի քանի անգամ վերափոխելով միևնույն  
բանը: Գրողը չի կարող ապրել մեկուսացած. նա  
պետք է մշտապես տեսնի մարդկանց, գիտի, ուսում-  
նասիրի նրանց: Յեվ Լ. Տոլստոյը վորոչ քանակու-  
թյամբ ժամեր հատկացնում էր մարդկանց հետ խո-  
սակցություն ունենալու, ընթերցանության համար  
և այլն:

Ճիշտ այդպես էր աշխատում նաև Ֆրանսիական  
վիպասան Զոլյան, վորը գրել է հակայական քանա-  
կությամբ վեպեր, վորոնք բնութագրում են հասա-  
րակության դանաղան խավերի կյանքը կապիտալիզմի  
որով: Զոլյան արթնանում էր առավոտյան ժամը 6-ին  
և, ինչպես Տոլստոյը, գրում էր առավոտյան ժամե-  
րին, մնացած ժամանակը ծախսելով հասարակության  
այն խավերի ուսումնասիրման համար, վորոնց նա  
նկարագրում էր:

Վերցնենք մեծ յերաժիշտների, որինակ Բեթհովեն-

նի կյանքի նկարագրագույնությունը և դուք կտեսնեք, թե նա ինչպիսի հսկայական քանակությամբ ժամանակ էր ծախսում դաշնամուրի վրա նվագելու համար և թե նա ինչպես խտորեն էր դասավորում իր ժամանակը:

Իրենց ժամանակն էլ ավելի խտորեն են դասավորում բնագետները, բժիշկները, գիտնականները, վորոնք աշխատում են լաբորատորիաներում՝ միկրոսկոպի վրա, անատոմիական թատրոնում: Կարգացեք որինակ եղիտոնի, Լույի Պատերի և մտքի այլ ակա-նավոր դուծիչների աշխատանքի մասին և դուք կտես-նեք, թե նրանք ինչպես խտորեն եյին դասավորում իրենց ժամանակը, ինչպես եյին խնայում յուրա-քանչյուր րոպեն:

Հայտնի վիրաբույժ Կոխերը, նույնիսկ ծերուկիան հասակումն էլ ամենայն խտությամբ դասավորում էր իր ուրը, վորոչ ժամի պատկում էր քնելու, ամեն ոք վորոչակի ժամի թենիս էր խաղում, վորպեսզի պահպաներ ձեռքի ամբուկությունը վիրահատությունե-րի ժամանակ և այլն:

Յեկ այդպիսի որինակներ դուք կդտնեք հազար-ներով: Նա, ով ուզում է հասնել լայլ արդյունքների, պետք է ամենայն խնամքով խնայի ու դասավորի իր ժամանակը:

## ՍՏԵՂԾԵԼ ՌԻՍՈՒՅՄԱՆ ՀԱՄԱՐ ՆՊԱՍԱՎՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վորպեսզի աշխատանքը ճիշտ ընթանա, վորպեսզի ավելորդ ժամանակ, յետանդ չծախսվի, հարկավոր է ստեղծել աշխատանքի համար հնարավորին չափ նպաստավոր պայմաններ:

Ամենակարևոր պայմանը—գլխի թարմությունն է, հոգնածության բացակայությունը: Հոգնած մարդն աշխատում է և՛ շատ ավելի դանդաղ, և՛ շատ ավելի վատ: Աշխատանքի ամենալավագույն ժամերն, ի հար-կե, առավոտյան ժամերն են:

Վորպեսզի ճիշտ և յետանդուն աշխատի գլուխը, աշխատի ուղեղը, հարկավոր է վորպեսզի ճիշտ, հա-մաշափ աշխատի սիրտը, իսկ դրա համար հարկավոր է թարմ ոդ: Չի կարելի աշխատել չափից դուրս տոթ կամ չոզ սնեյակում: Պարսպմունքից առաջ անհրա-ժեշտ է բաց անել ողանքը կամ լուսամուտը, թար-մացնել ոզը: Ծխով լցված կամ ծանր ոզով սնեյա-կը ծայրահեղորեն բացասաբար է անդրադառնում պարսպմունքների վրա:

Նպաստավոր պայման է հանդիսանում նաև ու-չադրություն գրավող արտաքին տպավորությունների բացակայությունն աշխատանքի ժամանակ: Չի կարելի պարսպել, յերբ չուրջդ աղմկում են, խոսում, յերբ ամեն րոպե քեզ դիմում են վորևե, թեկուզ և վորք

Նշանակութիւնն ունեցող հարցով: Անհրաժեշտ է հարգել ուրիշի հանդիսարը և չաղմկել, չսուբել, չխոսել, չերբ մեկ ուրիշը պարապում է: Պետք է իրեն սովորեցնել պարապելու դրադարանում կամ ակումբում: Գրադարանում վոչ մի բան ուշադրութիւնը չի շեղում պարապմունքից: Բացի դրանից, դրադարանում ձեռքի տակ կան ենցիկլոպեդիկ բառարաններ, ուղեցույցներ, աստլաներ, դասագրքեր, վորոնցից հարկ է լինում որդովել լուրջ ընթերցանութիւն ժամանակ:

Ճիշտ է, յերբեմն մարդ կարող է պարապել անսասելի աղմուկի և իրարանցումի մեջ, բայց դրա համար անհրաժեշտ է, վորպեսզի դիրքը վրամ աշխատանքն այն աստիճանի կլամի և դրավի նրան, վոր նա ի վիճակի լինի չնկատելու այն, ինչ կատարվում է չըջապատում: Հայտնի յե հունական դիտնական, հայտնի յերկրաչափ Արիստեղի մասին պատմածը. նա այնքան է կլամված յեղել իր դժադրութիւններով, վոր յերբ նրա տունն է մտնում թշնամին և նրան մտտենում է գինիօրը, նա միայն ասում է՝ «Ձեռք չըտաս իմ չըջադժերին»: Վո՛չ յուրաքանչյուրը և վո՛չ ամեն ժամանակ կարող է աշխատեալ ամբողջութեամբ կլամված լինել ուսումնասիրվող առարկայով, վորպեսզի չնկատի, թե ինչ է կատարվում շուրջը: Ուստի, շատ ավելի լավ է, յեթե արտաքին վոչ մի բան չի շեղում պարապողի ուշադրութիւնը: Ի դեպ, պարապմունքներին հաջողութիւնն ժամանակ անհրաժեշտ է նաև, վորպեսզի ուշադրութիւնը չգրավեն կողմնակի մտքեր և վորպեսզի չստացվի այնպես, ինչպես Յեզգենի Ռնեզինի մոտ, վորի մասին Պուշկինը դրում է՝

Նրա աչքերը կարդում էին,

Բայց մտքերը դանվում էին հեռուն...»:

Ահա թե ել ինչու, ի միջի այլոց, ավելի լավ է պարապել առավոտները: Նախորդ որվա սպասվորութիւնները դիչերվա ընթացքում վորոշ չափով թուլանում են, նոր սպասվորութիւններ դեռևս չկան և վոչ մի բան առայժմ չի խանգարում հոգեկան հանդիսարը: Յեթե չկա հարկ յեղած հանդատութիւնը և պարապմունքի համար անհրաժեշտ տրամադրութիւն, պետք է աշխատել ստեղծել աշխատին. արագ անց ու դարձ անել սենյակում, վերհիշել մի հայտնի դեպք մի յերկու եջ կարդալ սիրված հեղինակից կամ թե դարձի դնել նման վորևէ այլ պրիյոմ:

## ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԱՆՀՐԱԺԵՑ ՌԻՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վորպեսզի աշխատանքը հաջող ընթանա, անհրաժեշտ է տիրապետել վորոշ ունակություններին, առանց վորի չի կարելի աշխատել գրքի վրա:

Այդպիսի ունակությունների թվին է պատկանում կարդալ, դրել, թվական նյութի հետ վարվել, աշխարհագրական քարտեզ կարդալ կարողանալը և այլն:

Պետք է իր մեջ զարգացնել մտքում արագ կարգալու սովորություն, սեղմ, գործնական նշումներ կատարելու սովորություն, գրքին վորոշ հարցումներով մոտենալու սովորություն: Ի՞նչու չե՞սանհրաժեշտ իր մեջ զարգացնել այս սովորությունները: Նրա համար, վորպեսզի աշխատել առանց ժամանակի ու յետանդի ավելյորդ ծախսման:

Մենք դիտենք, թե որինակ, հասակավոր անդրադետն ինչպիսի դժվարությամբ է սովորում տառերը կապելը, կամ թե կիսազրագետի համար յերբեմն վորքան դժվար է լինում դրել իր ազգանունը, ինչպես յերկար ժամանակ նա ճղում է և թե հաճախ ինչպիսի ջանք է նա գործադրում այդ ազգանունը գրելու համար: Պարզ բան է, վոր քանի դեռ այդ պրոցեսները կլանում են նրա ամբողջ ուշադրությունը, նա չի կարող կենտրոնանալ կարդացածի մտքի վրա: Ին-

չոր ուժերը ծախսվում են տեխնիկան հաղթահարելու վրա: Ահա՛ թե ինչու, անհրաժեշտ է իր մեջ զարգացնել վորոշ ունակություններ: Առանց դրան անհրաժեշտ է նախ և լուրջ սրբապմունքերը:

## ՃԻՅՏ ԸՆՏՐԵԼ ՊԱՐԱՊՄՈՒՆԻՒՆԵՐԻ ՆՅՈՒԹԸ

Թե ի՞նչ դեր է խաղում նյութի ընտրութիւնը ժամանակի և եներգիւյսի տնտեսման տեսակետից, մենք արդէն ասացինք վերևում: Այստեղ անհրաժեշտ է միայն մի քանի խոսքով կրկնել արդէն ասվածը:

Անհրաժեշտ է ձեռնամուխ լինել միայն այնպիսի աշխատանքի, վորն ուժից վեր չե— սետք և ձեռնամուխ լինել հատուկ դրքերի: Ձեռնամուխ լինել ուժից վեր դրքի, նշանակում է անտեղի ուժեր ծախսել և իզուր սպանել ժամանակը:

Ի հարկէ, սետք է դիրքն ընտրել այն հարցերի վերաբերյալ, վորոնք հարկավոր են ուսումնասիրել, ամենալավագույն դրքերն առավել լիակատար, խորը և ճիշտ են լուսաբանում տվյալ հարցը: Յե՛վ, վերջապէս, սետք է կարգալ սկսել առավել հետաքրքրող հարցի վերաբերյալ դրքերից, ատտիճանաբար ընդարձակելով ուսումնասիրվող բնագավառը, ընդգրկելով հարակից կարեւոր բնագավառները և այդպիսով բոլոր նոր ձեռք բերվող գիտելիքները կազմակերպել հիմնական կորիզի շուրջը:

## ՊԱՐԱՊԵԼ ՊՇԱՆՈՎ

Հարկավոր է նաև իր մեջ մշակել վորոշակի, քախայես նշված պլանով աշխատելու հմուտքը: Պարապմունքների մեջ քիչ փորձ ունեցող մարդը սովորաբար շատ է ցրվում, մեկ վերցնում է այս պիւքքը, մեկ ուրիշը. մի թեմային ինչպես հարկն է չտիրապետած, ձեռնարկում է մյուսին: Պարապմունքների այդպիսի յեղանակը շատ քիչ է արտադրողական, շատ քիչ է շահավետ: Չպետք է այս ու այն կողմ նետվել, այլ իր առաջ պետք է դնել վորոշակի ու կոնկրետ նպատակներ: Ասենք, թե մարդ ուզում է ուսումնասիրել կապիտալիզմի հարցը: Դա շատ լայն նպատակ է: Դրան հասնելու համար հարկավոր է այդ ընդհանուր թեման բաժանել մի շարք ավելի սահմանափակ թեմաների: Դրանցից ընտրել մեկը, ասենք ժամանակակից կապիտալիզմը: Այնուհետև հարկավոր է ե՛լ ասելի սահմանափակել նաև այդ թեման: Որինակ՝ սկսել ուսումնասիրել ժամանակակից կապիտալիզմը վորեւէ մի յերկրում— ասենք Անգլիայում, այնուհետև ե՛լ արվելի հետուն գնալ սահմանափակման ուղիով և ընտրել, ասենք, բանվոր դասակարգի դրութիւնն ուսումնասիրումն Անգլիայում՝ ժամանակակից կապիտալիզմի որոք: Տվյալ, կոնկրետ կերպով առաջադրված թեմային տիրապետելուց հետո միայն, կարելի չե անցնել հաջորդ հարակից կոնկրետ թեմային և դրան

եւ տիրապետելուց հետո միայն դնալ առաջ: Այդ, թեմային բախականաչափ խորը կերպով տիրապետելու ամենաարդյունավետ յեղանակն է: Ի հարկե, վորպես-դի ի վիճակի լինել իր համար կազմելու այդպիսի պլան, պետք է ունենալ արդեն վորոչ, թեկուզ և ամենաընդհանուր պատկերացում այդ ամբողջ թեմայի վերաբերյալ:

Գրքի վրա աշխատել սկսողը պետք է իր առջև դնի մոտակա, իր ուժերին մատչելի նպատակներ: Միայն այդ յեղանակով նա կկարողանա հաղթահարել ընդհանուր խնդիրը:

Գրքի վրա նոր աշխատել սկսողի համար պլաններ կազմելը բախական դժվար դործ է, շնորհիվ այն բանի, վոր նա պարզ չի պատկերացնում այն նյութի ծայալը, վորը պետք է ուսումնասիրել, ինչպես նաև ընդհանուր թեմայի առանձին բաղկացուցիչ մասերը: Այստեղ նոր ընկերոջը պետք է ողնության դան ընդհանուր թեմայի ամբողջ մոտիկից ծանոթ ընկերները, կամ թե համապատասխան ձեռնարկներն ու ուղեցույցները: Այս տեսակետից դանդան դասընթացները ունկնդիրները դտնվում են ավելի նպատատվոր պարմաններում: Նրանք, ինչպես դյուղացիներն են ասում, «ասլում է ուրիշի պարսպի հետևում»: Նրանց համար աշխատանքի պլան կազմում են դասընթացների դեկալարները: Այդ, ի հարկե, ավելի հեշտ է և վորոչ չափով ձեռնատու յե նոր պարսպել սկսողի համար— նա յենթակա չե սխալ ուղիով դնալու վտանդին:

## ՀԱՄԱՏԵՂ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Կանդ առնենք նաև հետևյալ հարցի վրա— ի՞նչ պես է ավելի արդյունավետ պարսպելը՝ մենա՞կ, թե կոլեկտիվ կերպով: Ամեն բան կախած է նրանից, թե ինչպես են կազմակերպվում պարսպմունքները:

Ինքնակրթությամբ մենակ պարսպել սկսողի համար հաճախ դժվար է լինում: Ուստի, ավելի լավ է իր համար ընտրել աշխատանքի ընկերակից, վորի հետ մշտապես կարելի յե մտքերի փոխանակություն կատարել, համատեղ քննարկել հարցերը: «Մեկ խելքը լավ է, յերկուսն առավել»: Կարևոր է, վորպեսզի նա ասլելիս լինի վոչ հետու կամ թե աշխատելու լինի նույն տեղում:

Հատկապես կարևոր է միասին քննության առնել այն հարցը, թե ի՞նչ կարդալ, միասին կազմել աշխատանքի պլանը, ստուգել, թե վորի աշխատանքն ինչպես է ընթանում, միասին քննարկել անհասկանալի հարցերը, միմյանց տղնել հաղթահարելու դժվարությունները: Շատ կարևոր է միմյանց պատմել կարդացած նյութը: Այդ սովորեցնում է խոսել կարևոր, լուրջ հարցերի մասին, ստուգել իրեն. թե վորքանով է յուրացված կարդացածը: Պատահում է այսպես. կարդում էս և թվում է, թե ամեն բան հասկացել էս, իսկ յերբ վոր տկում էս պատմել, տեսում էս, վոր վորոչ տեղեր հիշողությանդ մեջ չեն

մնացել, վորոչ տեղեր բախտականաչափ պարզ չեն: Յերկուսով աշխատելն այս տեսակետից չնախազանց շատ բան է տալիս:

Յերբ ինքնուրույն ընթերցանության աշխատանքը սովորություն կդառնա, շատ կարևոր է, վորպեսզի ինքնուրույն աշխատանքի ընկերներն սկսեն նշումներ կատարել, այսինքն վորպեսզի նրանցից յուրաքանչյուրն իր համար ունենա մի տետր, վորտեղ համառոտակի դրի առնել, թե ինքն ինչ է ստացել ուսումնասիրվող հարցերի վերաբերյալ վարդացած դրճերից ու թերթերից:

Յենթագրենք, վոր նա ուսումնասիրում է միջազգային դրությունը: Կարդում է «Պրավդա»-ն: Յե՛վ ահա նա իր տետրի մեջ դրի յե առնում, վոր այսինչ որը «Պրավդա»-ում կարդացել է Չինաստանում տեղի ունեցող պատերազմի մասին: Նա դրի յե առնում վոչ թե ամբողջը, այլ ամենաեյականը, ամենակարևորը: Յեթե կարդացած նյութի մեջ նման մի վորևե բան հատկապես հետաքրքրում է, հուզում, — այդտեղից կարելի յե քաղվածք կատարել: Փորձը ցույց է տալիս, վոր այդպիսի տետրեր ունենալը շատ է ոգնում հարցն ըմբռնելուն, ոգնում է հասկանալ թերթի մեջ դրվածը, ասելի էյականը տարբերել պակաս չափով էյականից:

Նրանք, ովքեր ուսումնասիրել են Լենինին, պիտեն, թե նա վորքան շատ քաղվածքներ էր կատարում իր կարդացած թերթերից ու դրճերից, ինչպիսի արժեքավոր գիտողություններ էր կատարում լուսանցքներում, ինչպես էր ընդգծում ամենակարևոր ու հետաքրքիր միտքը:

Յեթե ինքնակրթությամբ պարասյոզ ընկերները ունենան քաղվածքների տետրակ, և ապա, ասենք, յուրաքանչյուր յերկու վեցորտակը մեկ անգամ միմյանց ցույց տան իրենց կատարած նշումները, այդ չափազանց շատ բան կտա նրանց, նրանց ուշադրությունը կկենտրոնացնի մի շարք նոր հարցերի վրա:

Այժմ ուսուերեն լեզվով թարգմանված են Մարքսի և Ենգելսի նամակագրությունները: Մարքսը և Ենգելսը, ինչպես հայտնի յե, յերկար տարիներ գիտական աշխատանքի համընկերներ էյին: Այդ նամակագրությունը շատ վառ կերպով ցույց է տալիս, թե ինչպես համատեղ աշխատանքն ոգնում էր մարքսիզմի մեծ հիմնադիրներին, թե ինչպես նրանք խորհրդակցում էյին միմյանց հետ, աշխատանքի մեջ ոգնում էյին միմյանց:

Համատեղ աշխատանքն ոգնում է վոչ միայն մեծ, մարդկանց, մեծ գիտնականներին, այն ոնցում է նաև շարքային աշխատողներին ու նրանց, ովքեր իրենց հանրակրթական գիտելիքները չըջանակը լրացնում են ինքնուրույն աշխատանքի, ինքնուրույն ընթերցանության միջոցով:

Պատահում է այնպես, վոր վոչ միայն յերկու ընկերներով են համատեղ աշխատում իրենց ինքնակրթության վրա, այլ պատահում է, վոր միևնույն հարցով հետաքրքրվող մի քանի ընկերներ միանում են, այդ հարցը համատեղ աշխատանքի միջոցով ուսումնասիրելու համար:

90-ական թվականներին Պիտերում կազմակերպվելին Մարքսի և Ենգելսի յերկերն ուսումնասիրող մի շարք խմբակներ: Յուրաքանչյուրն աշխատում էր

ինքնուրույն կերպով, կարողում եր, իր համար քաղ-  
վածքներ եր կատարում, խմբակում քննարկման եր  
գնում իրեն հատկապես հետաքրքրող հարցերը: Սովո-  
քարար այդպիսի խմբակում աչքի յեր ընկնում առա-  
վել պատրաստված մի ընկեր, վորը հատկապես ակ-  
տիվ կերպով ոգնում եր ընդհանուր ուսուցմանը: Ինչ-  
պես հայտնի յե, այդ մարքսիստական խմբակները  
մեծ գեր խաղաղին Ռուսաստանում մարքսիզմի դա-  
դավարները տարածելու գործում:

Բանվորական խմբակներում սովորաբար լինում  
եյին ղեկավարներ, բայց այդ հանգամանքը չեր խան-  
գարում, վորպեսզի ընկերական փոխհարաբերություն-  
ներ լինեյին խմբակի ղեկավարի և խմբակն այցելող  
բանվորների միջև: Ընդհակառակը, խմբակները նը-  
պաստում եյին նրանց դադավարական մերձեցմանը—  
բանվորները սովորում եյին խմբակի ղեկավարից,  
ղեկավարը սովորում եր բանվորներից:

Ինքնակրթությամբ պարապողների կոլեկտիվ աչ-  
խատանքը պետք ե ճիշտ կազմակերպված լինի:

Մշտապես կարծիքների փոխանակություն կատա-  
րելն ողնում ե ավելի լավ պարզելու իր համար այն  
բոլորը, ինչ անհասկանալի յե յեղել: Ընկերական  
գիսկուսիաներն ուժեղացնում են հետաքրքրությունը.  
Ինչպի պարապմունքները տալիս են մտքի նոր խթան:

Ներկայումս շատ հաճախ խմբակային աշխատան-  
քը կազմակերպվում ե միանգամայն ձևականորեն:  
Սմբակի անդամների ինքնուրույն աշխատանքը հետին  
պլանն ե մղվում, խմբակների անդամների ընտրու-  
թյունը շատ պատահական ե, խմբակները կազմակեր-  
պողները հաճախ քիչ են ճանաչում խմբակի անդամ-

ներին, քիչ են ծանոթ նրանց պատրաստությանը,  
նրանց պահանջներին: Այդպիսի խմբակները քիչ բան  
են տալիս, իսկ հաճախ նույնիսկ խանգարում են ինք-  
նուրույն աշխատանքին:

Հենց այդպիսի խմբակների մասին ե խոսում Համ-  
Կ(բ)Կ կենտկոմի վորոշումը պրոպագանդայի մասին,  
մատնանշելով, թե ինչպես պետք ե վերակառուցել  
ՀամԿ(բ)Կ պատմության ուսումնասիրությունը:

## ՈԿՏՎԵԼ ԶԵՌՆԱՐԿՆԵՐԻՑ ՅԵՎ ՌԻՂԵՑՈՒՅՑ ՆՅՈՒԹԻՑ

Բայց անկախ նրանից, աշխատանքը կատարվում է կորեկտիվ, թե ինքնուրույն, վորպեսզի այդ աշխատանքը չսխալանա և ավելորդ ժամանակի ու ենթադրաբար ծախսում, անհրաժեշտ է, վոր ավորողի տրամադրությամբ տակ լինեն մի շարք անհրաժեշտ ձեռնարկներ և ուղեցույցներ, վորոնք ոգնում են աշխատանքը դնել նիշտ և խելի վրա: Մենք չենք ևս բառարաններ, ընթերցանության համար առավել կարևոր գրքերի հանձնարարական գրացուցակ, վորի մեջ մատնանշված լինի, թե ի՞նչ է տալիս յուրաքանչյուր դիրք, ի՞նչ պիտի պատրաստվում է հարկավոր այն կարգալու համար, և այլն: Պետք է լայնորեն ոգնվել թեթևություն և ժուռնալներում տպագրվող կոնսուլտացիաներից: Այդ ձեռնարկների առկայությունն ինքնակրթությանը պարասպորտների աշխատանքը կըարձնի շատ ավելի արտադրողական:

Շատ լավ է հնարավորության դեպքում ուղտվել հեռակա կրթությանը դասադրքերից, վորոնք ըստ կյանքի հանդիսանում են հեռավոր կոնսուլտացիա և չափազանց լավ ոգնում են յուրացնել նշված դասընթացը:



«Միայն և կարծել, թե թեորիային տիրապետելու

խնդիրն աշխատողների միայն վորչ մեծ շրջանի ուսուցիչն է ներելի: Մարքս-լենինյան թեորիան տիրապետելը ձեռքբերովի դործ է: Հենց այժմ Խորհրդային իշխանության և ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի որով ստեղծված են անասհամարակ հնարավորություններ, վորպեսզի մեր ղեկավար կադրերը հաջողությամբ տիրապետեն մարքս-լենինյան թեորիային, ուսումնասիրեն կուսակցության պատմությունը, Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի աշխատությունները: Մարքսիզմ-լենինիզմի թեորիային տիրապետելու համար հարկավոր է միայն յերեվան բերել ցանկություն, հաստատակամություն և ընդվորության ամբողջում՝ այդ նպատակին հասնելու գործում: Ցեթե կարելի չէ հաջողությամբ տիրապետել այնպիսի դիտությունների, ինչպես որինակ՝ Ֆիլիկան, զիմիան, վենասաբանությունը, ապա առավել ևս հիմք միան, վենասաբանությունը, ապա առավել ևս հիմք է կա տարակուսելու, վոր կարելի չէ լիովին տիրապետել մարքսիզմ-լենինիզմի դիտությանը» (ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումը՝ «Կուսակցական պրոպագանդայի Կենտկոմի մասին» «ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» լույս ընծայման կապակցությամբ):

Այնուհետև այդ վորոշման մեջ ասված է. «կադրերին մարքսիզմ-լենինիզմ սովորեցնելու հիմնական մեթոդը պետք է հանդիսանա բուլլետենյան կուսակցության պատմությունը և թեորիան ինքնուրույն կերպով ուսումնասիրելու մեթոդը, վորը ստեղծված է բուլլետենյան ավագ սերնդի վործով...»:

Մարքսիզմ-լենինիզմի ինքնուրույն կերպով ուսումնասիրելու այդ մեթոդը տիրապետելը, մեր կողմից կարևորագույն խնդիրն է: Տիրապետել բուլլետենյան

մին— ահա՛ թե ինչ է մեզ հարկավոր վորպեսզի է՛լ  
ավելի հաջողութեամբ պայքար մղենք հանուն կո-  
մունիզմի :

## ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՅԵՐ

1. Ի՞նչպես պետք է աշխատել գրքի վրա, վոր-  
պեսզի ավելի լավ յուրացնել նրա բովանդակութիւնը :

2. Ի՞նչպիսի ունակութիւններ են անհրաժեշտ,  
վորպեսզի ինքնուրույն ուսուցումն ընթանա հաջո-  
ղութեամբ :

3. Ինչպես քաղվածքներ կատարել կարդացած  
գրքերից և ի՞նչն է հարկավոր գրի առնել :

4. Ի՞նչպիսի իրադրութիւնը, ինչպիսի պայման-  
ներն են ամենից ավելի նպաստավոր ինքնուրույն ու-  
սուցման համար :

## ԺՈՒՌՆԱԼԱՅԻՆ-ԼՐԱԳՐԱՅԻՆ 1939 Թ. ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՀԱՍՆԱՌՈՑ ԹՎԱՐԿՈՒՄԸ

Գրքի վրա ինքնուրույն կերպով աշխատելու հար-  
ցի շուրջը:

Յեմ. Յարոսլավսկի. — ՀամԿ(Բ)Կ պատմութեան  
ուսումնասիրման մասին: «Կոմսոմոլսկայա պրավդա»  
թերթ, հունվարի 15-ի, 1939 թ. էջ 2:

Ա. Մ. Պանկրատովա. — Գիտական-թեորետիկա-  
կան աշխատանքի մեծ դպրոցը (Մարքսի և Լենինի  
գիտական աշխատանքի մասին): «Պրավդա», 1939 թ.  
հուլիսի 1-ի, էջ 3:

Վ. Ադոբատսկի. — Ինչպես եր Լենինն ուսումնա-  
սիրում Մարքսի և Ենգելսի յերկերը: Ժուռնալ «Պրո-  
պագանդիստ» 1939 թ. № 5—6, էջ 53—61:

Մ. Բասկին. — Լենինի աշխատանքը գրքի վրա:  
Ժուռնալ «Մոլոդոյ բոլշևիկ», 1939 թ. № 7, էջ 42—  
47:

Կ. Բելսկի. — Նշումներ գրքի ընթերցման ժամա-  
նակ (մարքսիզմ-լենինիզմի ինքնուրույն ուսումնասիր-  
ման կազմակերպումն ու մեթոդիկան): Ժուռնալ «Վ.  
պրոմոչչ մարքսիստիկո-լենինսկոմու որրոզովանիյու»,  
1939 թ. № 3, էջ 55—60:

Ա. Պրիմակովսկի. — Ինչպես գրի առնել վարդա-  
ցածը: Ժուռնալ «Պրոպագանդիստ և ագիտատոր  
ՌԻԿԱ», 1939 թ. № 18, էջ 39—43:

Գ. Սուխով. — Ինչպես կազմել կոնսպեկտը: Ժուռ-  
նալ «Վ. պրոմոչչ մարքսիստիկո-լենինսկոմու որրոզով-  
անիյու»: 1939 թ. № 1, էջ 44—47:

Կադրերը տիրապետում են բոլշևիզմին. — (Հոդ-  
վածներ և թղթակցություններ «ՀամԿ(Բ)Կ պատմու-  
թեան համառոտ դասընթացի» ինքնուրույն կերպով  
ուսումնասիրման փորձի մասին): «Պրավդա», 1939  
թ. ոգոստոսի 26-ին:

Թարգմ. Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ  
Խմբագիր՝ Գ. ԶՈՀՐԱԲՅԱՆ  
Տեխ. խմբագիր՝ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինքնուրույն ուսուցման մասին . . . . .	4
Ուրհուրդներ ինքնակրթությամբ սլա- սել սկսողներին . . . . .	10
Ինչպես աշխատել դրքի վրա . . . . .	14
Տոտեսել ժամանակը և յեռանդը . . . . .	22



Գլավխտի լիազոր՝ Բ—1104 տիրաժ 2000 պատ. № 272  
Հայկական ԽՍՀ ԺԿՍ-ի հրատարակչություն  
«Խորհրդային Հայաստան»-ի տպարան, Յերևան.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԿՈՄԻՏԵ  
ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆ 1999 թվական  
Հայաստանի Գրադարանի  
Կոմիտեի կողմից

«Ազգային գրադարան»



NL0139922

130 63

276

Н. К. Крупская

**КАК САМОСТОЯТЕЛЬНО РАБОТАТЬ  
НАД КНИГОЙ**